«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բարոյական դաստիարակությունը որպես սանի արժեքային համակարգի ձևավորման միջոց

Դաստիարակ՝ Նվարդ Նազարեթյան

Մանկապարտեզ՝ Գյումրու «Լիանա-մսուր մանկապարտեզ»

ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն..... 3
Գլուխ 1. Բարոյական դաստիարակության դերը նախադպրոցական մանկավարժության մեջ:..... 5
1.1 Բարոյական դաստիարակության գործառույթը երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում: 5
1.2 Բարոյական դաստիարակության խնդիրներն ու իրականացման միջոցները: 6
Գլուխ 2. Բարոյական արժեհամակարգի դրսևորումը ինտեգրված պարապմունքի միջոցով: 9
Եզրակացություն 12
Գրականության ցանկ 13

Ներածություն

Երեխայի արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ դեր ու նշանակություն ունի բարոյական դաստիարակությունը: Դեռևս հնագույն ժամանակներից շատ մանկավարժներ, տեսաբաններ ուսումնասիրել են դաստիարակության այս տեսակի առանձնահատկությունները, դերն ու ազդեցությունը երեխայի զարգացման գործում:

Իսկ արդի ժամանակներում, երբ հասարակության մեջ շատ արագ են փոփոխվում արժեքային մոտեցումները, իսկ մանկավարժության մեջ կիրառվում է երեխայակենտրոն ուսուցումը, արդեն անգնահատելի է բարոյական դաստիարակության դերն ու նշանակությունը, ինչպես նաև մանկավարժի գործառույթը այս արժեհամակարգի սերմանման գործում:

Դեռևս մեծ մանկավարժ Ուշինսկին իր մանկավարժական աշխատություններում մեծ տեղ էր հատկացնում դաստիարակության այս տեսակին: Նա դաստիարակությունը բնորոշում էր որպես ներդաշնակորեն զարգացած անձնավորության ձևավորմանը նպատակաուղղված, գիտակցված պրոցես, որտեղ գլխավոր դերը հատկացվում է բարոյական դաստիարակությանը: Ուշադրության են արժանի նաև մանկավարժության տեսարաններ Լոգինովայի, Սամարուկովայի բարոյական դաստիարակության մասին մոտեցումները, որոնք առավել կարևորում էին առաջին հերթին բարոյական գիտակցությանը նպաստելու և զարգացնելու անհրաժեշտությունը /Логинова В. И., Саморукова П. Г., Дошкольная педогогика, (1 часть), Москва, «Просвещение», 1988г, 256с./

Ժամանակակից մանկավարժ տեսարանները գտնում են, որ բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: /Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ., Նախադպրոցական մանկավարժություն, «Զանգակ-97», 2008թ., 288 էջ/:

Ուսումնասիրելով մանկավարժների, տեսաբանների աշխատությունները, արդի ծրագրային մեթոդական, մանկավարժական գրականությունը՝ կատարել եմ հետազոտական աշխատանք՝ «Բարոյական դաստիարակությունը, որպես սանի

արժեքային համակարգի ձևավորման միջոց» թեմայով: Թեման խիստ արդիական է նրանով, որ երեխայի արժեհամակարգի ձևավորման մեջ մեծ դերը պատկանում է հենց բարոյական դաստիարակությանը, իսկ մյուսներն արդեն բխում են սրանից: Եթե բարոյական արժեքների հիմքը լավ դրվի երեխայի մոտ, ապա թե ուսումնական գործընթացում, թե՛ բոլոր ոլորտներում կհասնեք մեծ արդյունավետության. նամանավանդ արդի ժամանակներում, երբ կրթադաստիարակչական գործընթացն անընդհատ զարգանում է և հագենում նոր մեթոդներով և տեխնոլոգիաներով:

Աշխատանքի նպատակը – ուսումնասիրելով, վերլուծելով բարոյական դաստիարակության առանձնահատկությունները, խնդիրները՝ նպաստել երեխաների մեջ բարոյական արժեքների ձևավորմանը:

Հետազոտական աշխատանքը կազմված է 2 գլուխներից՝ առաջինում բարոյական դաստիարակության մասին ուսումնասիրություններ, վերլուծություններ է կատարված, երկրորդում ներկայացված է գործնական աշխատանքը՝ պարապմունքի պլան: Ավարտվում է եզրակացությամբ:

Գլուխ 1. Բարոյական դաստիարակության դերը նախադպրոցական մանկավարժության մեջ:

1.1 Բարոյական դաստիարակության գործառույթը երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում:

Երեխաների բարոյական դաստիարակության խնդիրը մշտապես եղել է հասարակության առջև ծառացած առանցքային հարց: Իսկ նախադպրոցական տարիքն ամենակարևոր շրջանն է երեխաների մեջ բարոյական արժեքներ սերմանելու համար:Քանի որ ասյս տարիքում է սկսվում երեխայի արժեհամակարգի ձևավորումը:

Նախադպրոցական տարիքի երեխան նման է մի ամբողջական զգայարանի, ընկալում և զգում է ամեն մանրուք, միշտ պատրաստ է արձագանքելու և հուզականությամբ մասնակցելու շրջապատում տեղի ունեցող իրադարձություններին:

Երեխան շրջապատող աշխարհն ընկալում է տպավորությունների և կերպարների միջոցով, որոնք խոր հետք են թողնում երեխայի կյանքում, ուստի շատ կարևոր է հենց նախադպրոցական տարիքից հիմք դնել երեխաների բարոյական դաստիարակությանը: Այս տարիքում երեխան չափազանց զգայուն է ցանկացած ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը և, ընդօրինակելով մեծահասակներին, փորձում է համապատասխանել մարդկային կենսակերպի բնորոշ չափանիշներին, դրսևորումներին:

Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: [Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ., Նախադպրոցական մանկավարժություն, «Զանգակ 97», 2008թ. էջ 161]:

Այն կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից: Արժեքային համակարգի աստիճանական յուրացման ընթացքում երեխան ձեռք է բերում որոշակի գիտակցված վերաբերմունք շրջապատող աշխարհի և սեփական «ես»-ի նկատմամբ: Արտաքին աշխարհի հանդեպ երեխայի դիրքորոշումն իրենից ներկայացնում է բարոյական զգացմունքների և պատկերացումների, բարոյական սովորությունների և

վարքագծի ամբողջություն, որն ամփոփ ձևով կարելի է բնորոշել իբրև բարոյական որակ:

Բարոյական որակի ձևավորումը ունի հետևյալ ընթացքը.

- Բարոյականության մասին գիտելիքների և պատկերացումների ձևավորումը:
- Արարքների և վարքի դրդապատճառների զարգացում:
- Աշխարհի հանդեպ դրական վերաբերմունքի և սոցիալական զգացմունքների ձևավորում:
- բարոյական արարքների խթանում:

Նշված մեխանիզմը նպաստում է ցանկացած բարոյական հատկության ձևավորմանը:
Այսպիսով, բարոյական որակի ձևավորման արդյունքում երեխան ձեռք է բերում բարոյականության երեք կարևոր հատկանիշ՝ բարոյական գիտակցություն, բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհին և բարոյական վարքագիծ:
Նշված հատկանիշներն օգնում են նրան կառուցելու արժևորված հարաբերությունների համակարգ՝ բարոյականության սկզբունքով:

1.2 Բարոյական դաստիարակության խնդիրներն ու իրականացման միջոցները:

Բարոյական դաստիարակության խնդիրների դասակարգման հարցը մշտապես հետաքրքրել է մանկավարժ-տեսաբաններին, որոնք փորձել են խմբավորել խնդիրները բարոյական դաստիարակության նպատակին հասնելու իրենց տրամաբանությամբ:

Ուշադրության է արժանի Վ. Ի. Լոգինովայի և Պ. Գ.Սամորուկովայի տեսությունը՝ նախադպրոցականի բարոյական դաստիարակության մոտեցման մասին, ըստ որի բարոյական դաստիարակության խնդիրներն իրականացվում են որոշակի տրամաբանությամբ և բաժանվում են 3 խմբի հետևյալ հաջորդականությամբ.

- բարոյական գիտակցության զարգացման խնդիրներ
- բարոյական վարքագծի ձևավորման խնդիրներ
- բարոյական զգացմունքների և հարաբերությունների հաստատման խնդիրներ: [Логинова В. И., Саморукова П. Г., Учебник для студентов педогогических вузов (1 часть), Москва, «Прсвещение», 1988г. 256 с.]:

Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունը սկզբունքորեն ընդունելով Վ. Ի. Լոգինովայի և Սամորուկովայի դասակարգման մոտեցումը առավել կարևորում է խնդիրների իրականացման ոչ այնքան հաջորդականությունը, որքան կազմակերպման եղանակը, նշելով, որ բարոյական դաստիարակության գործընթացում արդյունքը նույնքան կարևոր է, որքան և ցանկացած այլ մանկավարժական գործընթացում: Հետևաբար, դաստիարակության արդյունավետությունն առաջին հերթին ենթադրում է դաստիարակության հստակ մեխանիզմի առկայություն: Բացի այդ, ժամանակակից մանկավարժությունը կարևորում և հստակեցնում է անձնային հատկությունների ձևավորման ուղիները: Այսպիսով, ժամանակակից դասակարգմամբ բարոյական դաստիարակության խնդիրները բաժանվում են 2 խմբի: Առաջին խմբի խնդիրները կայուն են և անփոփոխ, դրանք արտացոլում են բարոյականության օբյեկտիվ՝ համամարդկային բնույթը և նպաստում երեխայի մեջ բարոյականության յուրաքանչյուր բաղադրիչի ինքնուրույն ձևավորմանը: Արդի մանկավարժության մեջ բարոյական դաստիարակության բովանդակությունն իրականացվում է անհատակողմնորոշիչ հաղորդակցման սկզբունքներով, այն է.

- դաստիարակության գործընթացը «երեխայակենտրոն» է, այսինքն, երեխան ընկալում է իբրև գերագույն արժեք, ինքնատիպ և անկրկնելի իր դրսևորումներով:
- դաստիարակության գործընթացի նպատակը անհատականության բացահայտումն է:
- դաստիարակության կարևորագույն սկզբունքը երեխայի ձևավորվող անձի հանդեպ սերն ու հարգանքն է:

Բարոյական դաստիարակությունը նախադպրոցական մանկավարժության մեջ իրականացվում է որոշակի միջոցներով: Նախադպրոցական տարիքում արդյունավետությամբ կիրառվում են գեղարվեստական միջոցներ, որոնք նպաստում են երեխայի բարոյականության զարգացմանը՝ գեղագիտական շեշտադրումներով: Նախադպրոցականի գեղեցիկի և բարոյականի մասին պատկերացումները փոխկապակցված են և ձևավորվում են փոխպայմանավորված: Գեղարվեստական

միջոցներից հարկ է հատուկ առանձնացնել մանկական գեղարվեստական գրականությունը: Հեքիաթների հերոսների գործողությունները մեծ հուզականությամբ են ընկալվում երեխաների կողմից և խորը հետք թողնում նրանց բարոյական զգացմունքների և պատկերացումների վրա: Հեքիաթների հերոսական կերպարները ընդօրինակման արժանի բարոյական նմուշներ են:

Բարոյական դաստիարակության ընթացքում անգնահատելի է բնության դերը, բնության հետ շփման ընթացքում ստացած դրական հուզական լիցքավորումը: Հզոր միջոց է երեխային շրջապատող սոցիալական միջավայրը, ուր երեխան ապրում և մեծանում է: Սիրո և փոխադարձ հարգանքի հիմունքներով կառուցված բարյացակամ մթնոլորտը, ընկերական փոխվստահելի հարաբերությունները խթանում են բարոյական դաստիարակության գործընթացը, ակտիվացնում և ուժգնացնում են բարոյական դաստիարակության մեխանիզմի ներգործությունը: Բարոյական դաստիարակության միջոցներ են մանկապարտեզում անցկացվող պարապմունքները՝ տարբեր մեթոդիկաներից, խաղերը, զբոսանքները, միջոցառումները:

Պարապմունքների ընթացքում երեխաներին ոչ միայն գիտելիքներ են փոխանցվում, այլև նրանց մեջ ձևավորվում են բարոյական արժեքներ՝ դաստիարակին և միմյանց լսել, աշխատել իրար օգնելով, տեսնել ընդօրինակել գեղեցիկը, բարին դրականը: Արդյունավետ միջոց է նաև խաղը, քանի որ երեխայի համար խաղն ունի այն նշանակությունը, որը մեծահասակների կյանքում հասարակական գործունեությունն ունի: Խաղի ընթացքում երեխան և ստանում և փոխանցում է բարոյական տարբեր արժեքներ:

Գլուխ 2. Բարոյական արժեհամակարգի դրսևորումը ինտեգրված պարապմունքի միջոցով:

Պարապմունքի պլան

Խումբ՝ Միջին

Պարապմունք՝ Խոսքի զարգացում

Տեսակը՝ ինտեգրված

Թեման՝ Ս. Մուրադյան «Նապաստակն ու բադը»

Նպատակը՝

- Կսովորեն հետևյալ նոր բառերը. կիսախեղդ, պարծենալ
- Կզարգացնեն միմյանց լսելու, հարցեր տալու հմտությունները
- Կխորացնեն գիտելիքները փոխօգնության, չմեծամտանալու, շնորհակալ լինելու վերաբերյալ:

Անհրաժեշտ նյութերը՝ հեքիաթի հերոսների նկարներ, Ա4 թղթեր, գունավոր մատիտներ:

Պարպմունքի ընթացքը

Խթանման փուլ՝

Հարցեր երեխաներին.

– Երեխաներ մտածեք, թե ո՞րն է ավելի լավ՝ լինել արագավազ, թե լավ լողալ իմանալ:

«Մտածիր - զույգ կազմիր կիսվիր» ռազմավարության միջոցով երեխաները մտքեր են փոխանակում զույգերով:

Յուրաքանչյուր երեխա իր զույգին լսածի վերաբերյալ տալիս է մեկ հարց, ապա երեխաները հայտնում են կարծիքներ:

Իմաստի ընկալման փուլ՝

– Դադարներով ընթերցանություն

Երեխաները նստում են շրջանաձև: Սկսվում է հեքիաթի ընթերցումը: Յուրաքանչյուր դադարից հետո հարց տալ երեխաներին և երեխաները զույգերով քննարկում են:

Քննարկումից հետո պատմում են, թե ինչի մասին են խոսել:

Նապաստակն ու բադը

Ս. Մուրադյան

Նապաստակը ձագուկների հետ անցնում էր լճակի մոտով: Լճակում բադեր էին լողում:

Նապաստակը բադերի մոտ պարծեցավ.

– Ես ձեզանից լավ կլողամ:

Դադար 1: Հարց 1.Քո կարծիքով ի՞նչ է ասելու բադը:

Ապա փորձիր – ասաց բադը:

Նապաստակը իրեն գցեց ջուրը և անմիջապես սուզվեց ջրի տակ:

Դադար 2: Հարց 2. Քո կարծիքով ի՞նչ եղավ նապաստակի հետ:

Բադերը մի կերպ հնեցին կիսախեղդ նապաստակին ու փորից ահագին ջուր հանեցին:

Նապաստակը հազիվ կմկմաց.

– Շնորհակալությո՛ւն, բադեր:

Դադար 3: Հարց 3.Ի՞նչ է ասելու բադը:

– Տեսնում ես, - ասաց մայր բադը, - պարծենալը ինչ վատ է: Մի՞թե բավական չէ, որ արագ վազում ես, դեռ ուզում ես մեզանից էլ լավ լողալ իմանալ: Ինչ քեզ տված է, բավարարվիր դրանով:

– Նապաստակը ականջները գցեց ու ձագուկների հետ վազեց դեպի անտառ:

  - Տեքստի ավարտից հետո քննարկման միջոցով ամփոփել՝ օգտագործելով հետևյալ հարցերը.

– Ի՞նչ սովորեցիք այս հեքիաթից

– Ի՞նչ հիշեցրեց ձեր կյանքից:

  - Ֆիզդադար՝ ցատկոտող նապաստակներ, լողացող բադեր:

Աշխատանք կենտրոններում

Արվեստի կենտրոն – նկարել հեքիաթի հերոսներին, տեսարաններ հեքիաթներից:

Դերախաղի կենտրոն – Հեքիաթը ներկայացնել դերախաղի միջոցով:

Երեխաները ընտրության վահանակով ընտրում են այն կենտրոնը, որտեղ որ ուզում են աշխատել և սկսում են աշխատանքը համապատասխան կենտրոններում:

Ավարտելուց հետո ներկայացնում են.

Արվեստի կենտրոնում աշխատած երեխաները ներկայացնում են իրենց նկարած աշխատանքները:

Նկարները փակցնել ցուցադրական պատին:

Դերախաղի կենտրոնում աշխատած երեխաները՝ բաժանելով դերերն իրար մեջ, ձևակերպելով բանավոր մտքեր իրենց բառերով ներկայացնում են հեքիաթը դերախաղով:

Կշռադատման փուլ՝

«Դեմ առ դեմ շրջաններ» մեթոդ:

Երեխաները կազմում են մեծ և փոքր շրջաններ, շրջաններով պտտվում են, հրահանգով կանգնում և ներկայացնում, թե ինչը դուր եկավ իրենց հեքիաթից:

Պարապմունքը անցկացվեց «Միջին» խմբում՝ 21 երեխայի մասնակցությամբ: Դիտարկեցին՝ տնօրենը, մեթոդիստը և ավագ խմբի դաստիարակը:

Պարապմունքի ավարտից հետո, ըստ իրենց արած դիտարկումների, կատարեցին վերլուծություն և ներկայացրեցին որ պարապմունքն հասավ իր նպատակին: Պարապմունքի միջոցով երեխաները սովորեցին, որ պետք է լինել համեստ, պետք է միմյանց օգնել, լինել միմյանցից շնորհակալ:

Աշխատելու ընթացքում զարգացվեցին միմյանց լսելու, հարցեր տալու հաղորդակցվելու կարողությունները:

Երեխաներն իրենց շատ ազատ և անկաշկանդ էին զգում, ակտիվ էին:

Պարապմունքն իր թեմայով, ընթացքով ամբողջովին ուղղված էր երեխաների մեջ բարոյական արժեքների ձևավորմանը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով բարոյական դաստիարակության առանձնահատկությունները, իրականացման միջոցներն ու մեթոդները՝ հանգեցի այն եզրակացությանը, որ դաստիարակության այս տեսակի դերն ինչպես բոլոր ժամանակներում, հատկապես ժամանակակից նախադպրոցական կրթադաստիարակչական ոլորտում կարևորագույնն է և երեխաների մեջ բարոյական արժեհամակարգ ձևավորելու համար պետք է այս ոլորտում կատարել շարունակական, զարգացնող աշխատանք: Նախադպրոցական մանկավարժության մեջ առավելագույն դրական արդյունքի համար պետք է կրթադաստիարակչական գործընթացը կազմակերպել՝ հենվելով բարոյական դաստիարակության գործառույթի վրա և պարապմունքների, խաղերի իրականացման նոր մեթոդներն անգամ կիրառել այնպես, որ ամեն մի գործունեություն երեխայի մեջ բերի մի նոր բարոյական արժեքի սերմանմանը, բարձր գիտակցմանը և որ ամենակարևորն է արդեն դրանց կիրառմանը, քանի որ ամեն մի արժեք երեխայի մեջ վերջնական ձևավորված է համարվում և դրական արդյունք է տալիս, երբ որ նա այն արդեն կիրառում է շրջապատի հետ շփման ժամանակ:

Այսպիսով՝ անգնահատելի է բարոյական դաստիարակության դերը երխայի արժեհամակարգի ձևավորման գործում, և նրա իրականացման մեթոդները պետք է մշտապես նորացվեն, կատարելագործվեն՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ., Նախադպրոցական մանկավարժություն, «Զանգակ-97», 2008թ.
2. Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2010թ.:
3. Логинова В. И., Саморукова П. Г., Дошкольная педагогика. Учебник для студентов педагогических вузов (1 часть), Москва, «Просвещение», 1988г.